

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

|                |        |
|----------------|--------|
| Պոչխարիտ համար | 12 ֆր. |
| սարկիս         | 7 "    |
| վեցումս այ     |        |
| Արսասահմանի    |        |
| համար սարկի և  | 15 ֆր. |
| վ. օտուսե այ   | 8 "    |
| Ավերհայի համար |        |
| սարկիս         | 3 ռ.   |
| վեցումսայ      | 1.50 " |

Իրանացիները առաջին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. երեսին ա էլի անգամներու համար 20 0/0 զեղջ կրչայ:

Լատուսի համար ձեռք 40 սանթիմ է

# ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳՅԻՆ. ԲԱՂՍԲԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏ ԲԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРИЯНЪ

Նամակ եւ գրուի  
ու կիչ ի մագրութեան  
հասցի ին

Редакция на вѣстникъ  
"Шаржумъ"  
Варна

Redaction du journa  
"Charjoum"  
Varna (Bulgarie)

Պոչխարիտ համար  
ձեռք

15 ՍԱՆԹԻՄ

Արսասահմանի համար

ձեռք

20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք ևս չեն

տրուիր

ՇԱՐՋՈՒՄԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏԻ ԵՒ ԿԱՆԻԿ ԿՃԱՐԷ

«ՏԱՍ ՏԱՐԻ Հ. Յ.  
ԳՆԸՆԱՆՈՒԹԵԱՆ ՍԷՁ»

Արդէն այս անունով բըրոշիւրը յանձնված է տպագրութեան:

Բրոշիւրի նպատակն է, առանց խճճանքի Գաղափարները մէջ տեղ դնել իր իսկութեամբը և միեւնոյն ժամանակ փաստել թէ՛ իմ պայքարը սկսված է շատ հին ժամանակից և վերջերս միայն սուր կերպարանք բնորոշնց. Ինչպէս է որ բրոշիւրի մէջ փաստող գոկի մաները մեծ տեղ պիտի գրաւեն:

Բրոշիւրի գինը տպագրութիւնից վերջ 3 ֆրանկ է լինելու. իսկ բաժանորդ գրվողի համար 2.50 ֆր.

Իրմել Եւրոպայի Խմբագրութեան

Café Promenade Vienne

Այս շքեղ քաղաքի կը գտնուի Վիեննայի Թրանց Ժողովք քաղաքին վրայ. կը ստանայ զանազան հայերէն թերթեր. Սա հասարակ բոլոր հայ կամարեւելքցի վաճառականները այս տեղ կը յաճախեն. Ուստի օտար երկիրներէ եկող հայերը կը հրաւիրուին դիմել հոս, ուր պիտի գտնեն իրենց յարմար դիւրութիւններ և անհրաժեշտ տեղեկութիւնները:

Կ Ո Չ

ԲՈՂՈՐ ՀԱՅ ՅԵՂՍՓՈՒԱԿԱՆ  
ԶԻՆՈՒՈՐ ՆԵՐՈՒՆ

Հայրենիքի հարստ և անկեղծ զինուորներ. ձեզի է որ կ'ուզեմ իմ կոչու. 1 թ սարի է որ Մայր Հայրենիքի աւերակները ներկայեցան մեր ամենէն լաւագոյն հերոսներու արիւնով. անոնք իննց գերեզմաններէն կոչ կընեն մեզի որ յարգենք մեր խօսքը, հետեւինք լիննց մեզի ըրած կտակին. անոնք Հայրենիքի փրկութեան պարտ-

քը աւանդեցին մեզի և ա՛յն հաւատքով մեռան որ, մենք՝ իրենց յաջորդները՝ նոյն ճանապարհով պիտի քայլենք:

Այսօր Հայրենիքի դրութիւնը աւելի քան կրիտիկական է. ամփոփենք ուժերնս, կազմակերպուինք, սպառազինուինք և մեր շարքերը աւելի ստուարացնենք. կեանքը՝ իր 16 տարուան փորձառութիւնովը ցոյց տուաւ որ գարեւոր ճնշումը ժողովուրդ մը ինչպէս է հայր, փոխանակ զանազան բաժանումներու ենթարկուելու և զանազան վարդապետութիւններ քարոզելու կամ հետեւելու այս ու այն ընկերային փոխադրուածութիւններուն, մէկ նշանաբան մը պէտք է գրէ իր գրոշակին վրայ—յանուն Հայրենիքի Փրկութեան՝ վազել սեղ մուր այս գրոշակին տակ—այս է սյուրուան պահանջը. բաւարարութիւն տանք այսօրուան Հայրենիքի պահանջին. իսկ վաղը երբ մեր Հայրենիքի պայմանները փոխուելով մեր վրայ նոր պահանջներ դնեն, այն ժամանակ կը փոխենք այսօրուան մեր գրոշակին նշանաբանը և վաղուան պահանջը կը տեղափոխենք հոն:

Եթէ չեմ սխալիր, այսպէս առաջ գալիս են նաև այն բոլոր ժողովուրդները՝ որոնք այսօր ազատ են:

Զգուշացէք, ահանջ մի՛ կախել կարգ մը թերթերու այն պրօպականտային, որոնք մտնաւոր ճիգ մը ունին մեր մտքերը պղտորելու. Այսօրուան այդ քարոզիչները՝ որոնք կը ճգնին մեզի առաջնորդելու, խելք սորվեցնելու, անոնք կեանքի մէջ իսկապէս և ոչ մէկ գործըրած ունին. ո՛ր էին անոնք երէկ, երբ Հայրենիքին լեռնէն ու ձորիցէն մենք զէ՛նք, զէ՛նք պղծեցինք, ո՛ւր էին այսօրուան խելք քարոզիչները՝ երբ մենք փամբուշտ պոռագիք և անհաւասար կռիւն մէջ հայ մարտիկը յուսահատութեան վայրկեաններ անցուց. ո՛ւր էին,

ինչո՞ւ չի յուզեցին թմրած հայրենի հոգին՝ որ գտն թե ու թիկունք ըլլան կռուի դաշտին վրայ արիւմանին դէմ կռուող ֆէտայիք:

Այսօր և նոյն կրակը կողկասը բռնկեցուցեր է, Հայ—Թաթարական կռիւը կը քանտէ հայ գիւղերը, քաղաքները. ի՞նչու այդ խելքները լոկ թերթ հրատարակելով, այս ու այն մտտերով, այս ու այն քննադատելով կը զբաղին. ա՛ս է մորթուող մարդուն պարտականութիւնը. քննադատութիւնն է գործը. ամօ՛թ որ մահը դուռնընդիս ափ առած է ու անոնք փոխանակ գարծին վրայ մտածելու՝ իրար կը բաժաւեն այն Յոյներուն պէս. երբ թուրքերը Պոլիսը կառնէին, իրենք հոգուոյն սրբոյ գոյութեան վրայ կը վիճէին:

Յեզափոխական Եղբայր Զինուորներ՝, իսկապէս բնաւ հարկը չիկայ հետաքրքրուելու և ուշագրութիւն դա՛նելու մեր կարգ մը ինտելիգենտներուն վրայ. բայց գժբախտաբար իրականութիւնը ցոյց տուաւ որ—չնորհիւ մեղմէ շատերուն անգիտակցութեան—կարգ մը հրատարակութեանց ցանած որոմները շափով մը սկսած են ձեր մտքերը պղտորել:

Վերջերս լրագիրներու մէջ տխուր լուրեր երեւան եկան, որոնց մէջ ամենէն ցաւալին այն է որ՝ հայը սկսած է իր եղբայր հայը սպաննել. Մշեցիին կը սպաննէ Պուլաւու խցին, Պուլաւը խցին՝ Մշեցիին, Վանիցին իր համաքաղաքացին, Հնչակեանը՝ Գաղափարացիները, ի՞նչու, ի՞նչ պատճառ կայ. ստոնք ըլլան անհատական կամ կուսակցական, երկու պարագային ալ՝ եղբայրասպանութիւնը մեղադրելի է. ետ կեցէ՛ք, զգուշացէ՛ք. քանի այդ զն. սակար գործը լայն ծաւալ առած չէ. անգամ մը խորհեցէք թէ ի՞նչ կընէր, ամօ՛թ է:

Զգուշացէ՛ք, ընկերներ՝, ցոյց

տուէք տուչմանին ու ամբողջ մարդկութեան թէ՛ հայ յեզափոխութիւնը ի՞նչ կուսակցութեան ալ որ պատկանի—թէ և կուսակցութիւններու այս կերպ գոյութիւնը այս բոլորներուն նախատինք մըն է մեր սղգութեան—վայրկեան մը անգամ եղբայրասպանութիւնը մտքովը չի կրնար անցնել:

Թշնամին թողուլ և ներքին մանր մուր հաշիւներով զբաղի՛ւ, ոճիւր է, հայրենիքի մա՛հն է:

Թողուցէ՛ք անձնական ի՞նչ կիրք որ ունիք. սչքի եկէք, աչքերնիդ անգամ մըն ալ դարձուցէք աւերակ հայրենիքին վերայ. տուչմանը իր գործը սիստեմաթիկ կերպով առաջ կըրտանի. արուեստական սո՛վ, գաղթականութիւնը աշխարհի շուրջ ծայրերը անվերջ ու անանուն հարկեր, մեր ընկերները՝ ճահիլ ճիվան կտրիճները բանտերուն խորքերը ամէն օր կը հային. կը մաշուին. թալանը, առեւանգումը և բոլոր այն բազմատեսակ թշուառութիւնները, որոնք սիրտ կը կտրստեն, արդէն արիւնաքամ ըրած են հայը Հայաստանի մէջ:

Ի՞նչ, Հայդուկներ. այդ գժբախտ երկրին յոյսը, ապաւէրը, մխիթարանք ու փրկութեան միակ մրջնոցը, սթափուեցէք. լռեցէք ու լռեցուցէք բոլոր այն կոմսակի, անօրուտ խօսք ու զրոյցները. ատոնք օգուտի տեղ զնուս կը բերեն, մեր ուժը ճգալտոր կընեն. զինուորին—նոյն իսկ կուզէ խմբապետ ալ ըլլայ անիկա—ի՞նչ գործն է ինչալ լրագրական խօսքի լաւութիւններն մէջ. ֆէտայիքն գո՛ւր պէտք ըլլայ իր զէնքը ու իր փամփուշտը, և նպատակը՝ Հայրենիքի փրկութիւնը, որուն 16 տարի է որ կեանքը առաջնորդ եղած է. չեմ ըսեր, որ համր ու խուլ ըլլայ անիկա, բայց ընտանեկան վէճերն ու խն. իրները կարելի է միշտ օրինաւոր ճամբով կարգադրել:

Սաւով կիմանամ որ տեղտեղ

հայ զինուորը իր կոչումին բարձրութեան վրայ չի գտնուի. այս պէտքով պատճառ կը գառնաք. դուք զինուորներ, որ թերթեւութեան մեջ ձեզ մեղադրեն, բան մը որ շատ անգամ կը ստանայ կուսակցական կերպարանք, քանի որ ձեզ առիթ բանելով կը յարձակին կազմակերպութեան վրայ. զգուշացէ՛ք, յիշեցէ՛ք որ այդպէսով դուք կը նսեմացնէք մեր հերոսներու յիշատակը. փետար յի ժաբուր անունը. և ձեր կազմակերպութիւնը կիյնայ ժողովրդին աչքէն. մանաւանդ յիշեցէ՛ք որ, դուք ժողովուրդին պաշտպանութեան համար է որ պէնք վերցուցած էք, և յոյն այդ ժողովուրդին բարօրութեան համար է որ մեր ընկերներէն հարկերն են հերոսաբար ինկան:

Դուք ձեր բոլոր բարոյական ու նիւթական ուժը ժողովուրդէն կառնէք, դուք անոր օրգիններն էք, ան ձեր մայրն է. յարգեցէ՛ք և լաւ վերաբերուեցէ՛ք դէպի ժողովուրդը. ձեր Մայրը մի նեղէք, անոր ցաւերը շատ են, բաւական են անոր իր նեղութիւնները:

Դուք մէկ նշանաբան մը միայն ունիք. փոխադարձ յարգանք և անշեղ գործադրումն այն բոլոր պահանջներուն— ունք բանաձևուած են հայ կեանքի ցաւէն և 16 տարուան փորձառութենէն:

Ընկերներ, տարիներ առաջ երբ մենք յեղափոխական գործին մէջ անփորձ էինք, բնական է որ ակամայ, թերութիւններ գործէինք, բայց այսօր 16 տարուան կեանքը մեզ փորձառու ու գիտակից ըրաւ. Այսպէս եղած է բոլոր յեղափոխական ազգերու կեանքը. ժամանակն է որ օգտուիլ գիտնանք մեր անցեալ սխալներէն:

Ատենէ մը ի վեր է որ մեր մէջ սկզբունքային խնդիրները շատ սուր կերպարանք ստացած են. կողմասահայ մամուլը, շնորհիւ իր ստացած խօսքի սզտուութեան, շատ ծայրայեղ վիճակի մէջ մտաւ, և ստիկա գլխաւոր պատճառներէն մէկը եղաւ մեր փոքրիկ ուժերուն անշատուելուն, բան մը որ իսկապէս թրջ նամուն փնտուած և չի գտածն էր:

Պէտք է անմիջապէս բսեմ որ ես դէմ չեմ համամարդկային եղափարներուն, բայց սակս ճշմարտ է որ համամարդկային գաղափարներն Եւրոպայի մէջ իսկ իրենց թէօրիական շրջանին մէջ են, և ընկերվարական առաջնորդներն անգամ հարե նիքի գաղափարը չեն ժխտեր, — «այն օրը որ հայրենիքիս վրէտանդ սպառնայ օտարէն՝ կը մոռ

նամ մէն բան և հրացան վերցնելով կուրի գաշաը կը յառաջանամ»:

Հասկնալի է ուրեմն հայրենիքի գաղափարին ուժը. հասկնալի է միեւնոյն ժամանակ թէ ի՞նչ պէտք է մարդ պէս փոքորկ ժողովուրդի մը համար, որուն զոյութիւնը այսօր վտանգի տակ է:

Իբրեւ վեջաբան՝ իմ կոչս է բոլոր յեղափոխական ընկերներուն, բոլոր հայ ժողովուրդին— կուսակցական ինչ գաւանթի ալ պատկանին— ժամանակ է որ սխալուինք, սեղմենք մեր շարքերը. ազատութեան գործը շատ դժուարին գործ մը դարցած է. մեծ ուժի կը կայօտի, ազգովին քով քովի գանք և այդ մեծ ուժը կազմենք. քաջութիւնը, դրամը զէնքը չէ որ կը պակսի մեզի. այլ կամքը. զօրացնենք մեր կամքը, և վստահ ըլլանք որ կը փրկուինք:

Կը յուսամ թէ այս փոքրիկ կոչս արձագանգ պիտի գտնէ լաւաբան չիւր հայրուկի սրտին մէջ՝ ինչպէս նաեւ ամէն հայ անհատի. կը յուսամ թէ մէկ կողմ պիտի ընենք ամէն անձնական դեսու. ու թշուառ ժողովուրդին դատին վրայ միայն պիտի դարձնենք մեր լուրջ ու շաղրու թիւնը: Հայութիւնը մէկ է՝ ըլլալ կողման թէ ճաճկաստան, և հետեւապէս ազգային շահերն իս ալ մէկ. ազգային վտանգը ուր որ ծայր տայ՝ ամէն հայու պարտականութիւնն է փութով դէպի վտանգը, ինչով, ինչ միջոցով որ կարող է:

Ընդունեցէ՛ք ընկերական ջերմ համբոյրներս  
ԱՆԴՐԱՆԻԿ  
«Ռուդիկ»

ԱՐԵՒԵԼԵՆ ԽՆԴԻՐԸ  
Ե Ի  
ՌՈՒՍ-ԹՐԿԱԿԱՆ ԴԻԻԱՆԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ՓՈՒՔՐ ԱՍԻԱ  
— — —  
(Շար. նսխորդ իրեն)

Տեղի ունեցաւ այն ինչ որ Ռուսիան բոլորովին չէր սպասեր. այդ պատերազմով ան կու գէր իրեն վասալ պետութիւններ ստեղծելով՝ Պօլիս հասնելու ճամբան դիւրացնելու բայց շուտով համոզուեցաւ այդ նպատակին հակառակ կը թէ մէջամենէ առաջ ան ինքզինքը գտաւ փոքրիկ պետութիւններու ապիւն որոնք ամենէն առաջ կու գէին անկախ ապրիլ և շատ քիչ կը հողային Ռուսիոյ քաղաքականութեան նեցուկ հանդիսանալու. Ռուս գիււանդատութիւնը անմիջապէս փոխեց իր ուղղութիւնը. ան թողուց կիսանկախ փոքրիկ ցեղեր ստեղծելու մտահոգութիւնը և հաւատարիմ մնալով ուղղափառ եկեղեցուն պատկանող թուրքոյ ժողովուրդներուն հովանաւորող դերին. ինք ալ Եւրոպայի պէս որոնց թուրքոյ ամբողջու-

թիւնը պահպանելու նեցուկ հանդիսանալ:

Սուլթանի քաղաքականութիւնը պաշտպանելով կը ձգտէր անոր աննայաւ բարեկամ դառնալ. անոր վստահութիւնը գրաւելով կը ձգտէր տիրող հանգիստնալ թուրքոյ բոլոր նահանգներուն մէջ:

Ռուսիոյ արտաքին քաղաքականութեան այդ սուր փոփոխութիւնը սեղմ կապուած էր եւ ներքին քաղաքականութեան հետ. ներքին քաղաքականութիւնը 30 տարի ներս ընթացած կը վարէր Սիւնդի նախին բրօքօրօր Պօպեօնօսօցիւ. Աղլիսով Ապալու Համիտին ալիւնոտ քաղաքականութիւնը ուղղակի թէ անուղղակի ձեռք ձեռքի տուած կը ընթանար Պօպեօնօսօցիւ քաղաքականութեան հետ:

Ակամայից աչքի կը զարնէ զուգրնթացութիւնը այդ երկու արեւելեան կայսրութեանց որոնց մին մեծնու իսկ միւսը վերստին վրայ է. իյօք վերը յիշած պայտասկանը Ռուսիոյ մէջ բոլոր կատարուածներուն համար պատասխանատու չէր. սն միայն ուս ուղղափառ եկեղեցուն պաշտօնական գուրն էր. բայց ամենն ալ յայտնի է որ բոլոր պետական ժողովրդի. իշխանութեան ներկայացուցիչները գիտնալով անոր գորութիւնը անոր խորհուրդները կը հարցնէին եւ կուրօրէն կը հետեւէին. Այժմ Պօպեօնօսօցիւը եւ Ապալու Համիտի ինքնօրիւր կը վերջացնեն ձեր հասակի մէջ Երկուսին իսէօններն ալ մէկ էին. երկուսն ալ կը մտածէին դառնալ տիրող կրօնքին խալիֆաներ. և ի իշխող. կերպովին այս կամ այն ցեղին վրայ ալիւնու մօնօրօլը. Այդպիսով թուրքոյ մէջ երեւան եկաւ պաշտօնական համարաւորութիւնը. իսկ Ռուսիոյ մէջ համարաւորութիւնը եւ պաշտօնական ուսացումը:

Մարդկային եւ կենդանի ամէն բան սպանելով. առանց միջոցներու խտրութեան անոնք աշխատեցան մէկ յայտարարութեան վերածել. ինչ որ հակառակ կերթար այդ յետադիմական գաղափարին. Ատենց քաղաքական տիրապետութեան, ինչպէս ամէն բանի, այժմ վերը կը մտնեայ Երկուսն ալ յաղաքական գործունէութեան ասպարէզէ կիջնան. Արոնց հրէշային քաղաքականութիւնը էր ձգտելու մարդկային պատմութիւնը կասեցնել մեծ գոնորու գնով:

Այդ սարսփելի սխանական քաղաքականութեան արդիւնքները ամենաբաղասական եւ տիւուր եղան. Ամբողջ երկիրը թէ փոքր Ասիոյ եւ թէ Մակեդոնիոյ մէջ կուչանայ սուր ճմուռին սակ. ինչպէս եւ Արաբիան. ուր արաբները քաջաբար ձեռք կը բերեն իրենց անկախութիւնը:

Նոյն իսկ թուրք բնակչութիւնը գրգռուած բռնակալ կառավարութեան դէմ իր մէջ ստեղծեց երիտասարդ թուրքերու շարժումը. որ օրէ օր կաճի եւ որու դէմ Սուլթանը պէտք է որ մաքառի:

Նոյն քաղաքականութեան Ռուսիոյ մէջ ստեղծած կացութիւնը սուրի աղէկ չէ. Պաշտօնական Ռուսացումը տեղի կու նենայ կեդրոնի մէջ հրէաներու վերաբերմամբ, ելեք ծայրերում Յինդուսիա, Լեհաստան, Կովկաս:

Այդ քաղաքականութիւնը առաջ կը տարուէր ամեն սեսակ ճնշումներով «հրով» եւ օրբով:

Պօպեօնօսի, Գուրիօ, Գոլիցին քաղաքականութեամբ և այդպիսի զօրաւոր նեցուկ մը ունենալով՝ համարձակ և առանց վարանոյ ի մէկ ձեւակերպութեան տակ կը թխմէին մեն բան ինչ որ կամուար չէր յանձնուէր:

Մասնաւորապէս հայ բնակչութիւնը վնասուեցաւ. որուն հալածումը մտաւ էր և Ռուսիոյ արտաքին քաղաքական ծրագրին մէջ:

Հայերը իր տան մէջ հայաձեւով ուս կառավարութիւնը իհարկէ բոլորովին անտարբեր հանդիսատես կը մնար թուրքոյ հալածանքներուն. Այդ թուրք ուս համարալիս քաղաքականութիւնը երկու ժամանակ անհասկանալի էր թուրքոյ քրիստոնեայ ժողովուրդներուն, որոնք մեծ յոյսեր ունէին դրած Պէրլինի դաշնագրութեան թղթային խօստումներուն վրայ. Այդ յօդուածները ոգևորուած եւ միամիտ մանկան զիւրահատութեամբ ընդունելով անոնք անընկճելի համբերութեամբ կսպասէին միջազգային դաշնագրութեան իրականացումը: Անոնք չը կըրցին գուշակել որ այդ խոստումները նոր ասանջանքներու և ցեղերու շնջման աղբիւր են:

Այդ ներքին եւ արտաքին քաղաքականութեան նշկ կապին եւ թուրք քաղաքականութեան համբարալուծութեան ու պաշտպանութի մէջ է որ պէտք է փնտուել վերջին տարիներս կովկասի սէջ տեղի ունեցած սարսփաներու պատճառները, երբ սեղօյին իշխանութիւնը աւելորդ եռանդով մը կը հրահչէր յեղալին կրքերը բնակչութեան— երբեմն վրայցիներու, երբեմն թաթարներու, երբեմն հայերու. Սուլթանը օգտուեցաւ Ռուսիոյ իրեն համաձայն քաղաքականութենէն և եռանդով սկսաւ աշխատել պանիսլամիզմի տարածման համար, որը պիտի ապահովէ իր գահին մեծութիւնը եւ ամբողջութիւնը: Իյօքակնաւոր մեծ յաջողութեամբ կը կատարուէր կովկասի մէջ, և կովկասեան վարչութիւնը համոզուեցաւ մէկ քանի անգամ նրկական փաստեր ձեռք անցնելով այդ շարժման երկազին հետ կապ ունենալու մէջ: Այդ ահասկ քաղաքականութիւնը ամբողջ կովկասը իրականաբար անիշխանութեան մասնեց, ահագին թաթար բնակչութիւնը գիտնելով նախ հայերուն ապա իշխանութեան դէմ:

Այդպիսով այդ մարդասեաց հոսանքը, Ռուսիոյ թուրքերու հետ բացած այդ խաղը, վախնալով որ Հայաստանը նոր Պուլկարիա մը չը գտնայ փոքր Ասիոյ մէջ, բոլորովին բացասական արդիւնքներ ունեցաւ:

Ռուս շահերու սեսակետով անհիմն վախը ուս զլւանագիտութեան թէ Պէրլինի դաշնագրութեան յօդուածներուն լիովին իրագործուել կրնայ երկրորդ Պուլկարիա մը ստեղծել— արդիւնք ունեցաւ՝ Ռուսիոյ բրէսթ-Ժին անկումը Արեւելքում և անոր հետագումը իր աւանդական քաղաքականութենէն:

Ռուս թրքական պատերազմի աւան հայերը ուս զօրքերու ճամբաները մաքրեցին և գտնուց գիմառրեցին օգուտութեամբ որուն համար ալ ժամանակն թուրքոյ մասնաւոր ասելու թեանը պատերազմէն վերջը:

Այժմ պանիսլամիզմի աճումովը



ները իրենց երեսովը տուցի :

Անոր կեանքը զէմ նրանց յայտա-  
լարած բոլորին մեծ կպատասխա-  
նենք. — Պարոններ, ձեր բոլոր  
մեզ համար մի կտորած գրոյ չարժէ,  
մի փոքր կորէկտ եղէք : Հասել էք  
այն աստիճանին, որ մեր թերթի  
ցր իշներին սպառնացել էք սթակելու  
Ձէք ամաչում :

Այո՛ պարոններ, ձեր միսիան սխալ  
ըմբռնեցիք, ձեր գործերը սխալ կա-  
տարեցիք, որովհետեւ անտակտ էք,  
խզի եւ համոզուելի մասին շատ  
թիւր կարծիք ունէք, իսկ ազատու-  
թիւնը բնութեամբ էք հակառակ ի-  
մաստով : Ազատութիւն էք ուզում,  
բռնութիւն էք գործ դնում, այս օ-  
րին էլ հասանք : ...

(Տես «Նոր կեանք» 1906, թիւ 5)  
Ե. Հայաստան

### ԻՆՉ Է ՍՍՈՒՍ ԱՆԴՐԱՆԻԿԸ

Սրանից շարժմանը առաջ մի  
յոզումով յայտնել էի թէ՛ հա-  
րիւր ունգամներով կեանքը վը-  
տանդի ենթարկած ժողովրդա-  
յին հերոս զուակը ուրիշներ  
թելագրութեանց պէտքը շունի  
ներկայ կացութիւնը ըմբռնելու  
համար : Այսօր Անգրանիկի կո-  
չը աչքիս առջեւ է և մեծ ու-  
րախութիւն եմ զգում որ սխալ-  
ված չեմ եղել այդ կտրիճ  
մարդի մասին ունեցածս համոզ-  
ման մէջ : Այդ ժամանակին մէջ  
տեղ եկած կոչից ես կը վերցը-  
նեմ այն կտորները որոնք զուզն  
ու ծուծն են կազմում և կատա-  
րելագէտ համաձայն են այն  
մտքերին ինչ որ մենք ենք պա-  
շանջել :

... կեանքը՝ իր 16 տարու փոր-  
ձառութիւնով ցոյց տուաւ որ դա-  
րբորով ճշշուած ժողովուրդ մը, ինչ  
պէս է հայը, փոխանակ զանազան  
բաժանումներու ենթարկուելու եւ  
զանազան վարդապետութիւններ քա-  
րոզելու կամ հետեւելու այսու այն ըն-  
կերային փոխադրութիւններուն  
մէկ նշանաբան մը պէտք է գրէ իր  
գրօշակին վրայ - յանուն հայրենիքի  
փրկութեան վազել՝ սեղմուիլ այս  
գրօշակին ասկ—այս է օրուան պա-  
հանջը, իսկ վաղը երբ մեր հայրե-  
նիքի պայմանները փոխուելով՝ մեր  
վրայ նոր պահանջներ դնեն, այն  
ժամանակ կը փոխենք այս օրուան  
մեր գրօշակին նշանաբանը եւ վաղ-  
ուան պահանջը կը տեղափոխենք :

Երկրորդ կարեւոր կտորը՝

«Այսօրուան այդ քա-  
րոզիչները՝ որոնք կը ճգնին մեզի  
առաջնորդելու խելք սորվեցնելու  
անոնք կեանքի մէջ լսկապէս եւ ոչ  
մէկ գործ ըրած ունին, ո՛ւր էին ա-  
նոնք երկէ, երբ հայրենիքին լեռնե-  
րէն ու ձորերէն մենք զէ՛նք զէ՛նք  
ազդերսցինք, ո՛ւր էին այսօրուան  
խելքները քայլողները՝ երբ մենք  
փամփուռ պտաւիք եւ անհաւա-  
սար կախին մէջ հայ մարտիկը յու-  
սահատու վայրկեաններ անցուց, ո՛ւր  
էին, ...»

Երրորդ՝ «Երկրորդ լրագիրներուն  
մէջ սխալութիւններ երեւան եկան,  
որոնց մէջ ամենէն ցաւալին այն է,

որ հայը սկսած է իր եզրայր հայր-  
սպանել : Մեզին կը սպաննէ Պո-  
լան խցին, Պալանխցին Մշեցի  
Վանեցին իր համաքողաքացին, Հըն-  
չակեանը Դաշնակցականը՝ Դաշնակ-  
ցականը Հնչակեանը : Ինչո՞ւ, ի՞նչ  
պատճառ կայ, ատորք ըլլան անհա-  
տական կամ կուսակցական, երկու  
պարագային ալ եղբայրասպանութիւ-  
նը մեղադրելի է, ետ կեցէք, զգու-  
շացէք քանի այդ փաստակար գործը  
լայն ծաւալ առած է, անգամ մը  
խորհեցէք թէ՛ ի՞նչ կընէք ամօթ  
է :

Ճշտով կրիմնամ որ տեղ տեղ  
հայ զինուորը իր կոչումին բարձ-  
րութեան վրայ շի գտնուիր, յիշե-  
ցէք որ զո՞ք ժողովրդին պաշտպա-  
նութեանը համար է որ զէ՛նք վեր-  
ցուցած էք եւ նոյն այդ ժողովրդին  
բարօրութեանը համար է որ մեր ըն-  
կերներէն հարիւրներով հերոսաբար  
իրկան :

Դուք ձեր բոլոր բարոյական ու  
նիւթական ուժը ժողովրդէն կտանէք,  
զո՞ք անոր որդիներն էք ան ձեր  
մայրն է յարկեցէք եւ լաւ վերա-  
բերուցէք զկարծ ժողովուրդը : Ձեր  
մայրը մի նեղէք, անոր ցաւերը շատ  
են, բաւական են անոր իր նեղու-  
թիւնները :

Իրրեւ վեղարան՝ իմ կոչն է բոլոր  
յեղափոխական ընկերներու, բոլոր  
հայ ժողովրդին կուսակցական ինչ  
զանաւանքի սլ պատկանին—ժամա-  
նակ է որ սթակուիրք, սեղմենք մեր  
չարքերը, ազատութեան գործը շատ  
զմուարին գործ մը դարձած է, մեծ  
ուժի կը կարծուիր ազգովին քով քովի  
զանք եւ այդ մեծ ուժը կազմենք : ...

Այս կոչով Անգրանիկ հաս-  
տատում և դատաւիտում է այն  
ինչ որ մենք էինք ասում : Նա  
լեւելայն մեղադրում է Դաշնակ-  
ցութեան նշանաբանին աւելցած  
նոր սօցիալիզմ : որի քարո-  
զիչները 1903ին կէս միլիոն  
ֆրանքի վրա ըստած Աստու և  
Մուշ— փոյ և զէնք չէին հասցը  
նում : պատճառաբանելով որ  
սպասում են ընդհանուր ժողո-  
վին : նա գտտաւիտում է եզ-  
բայրասպանութիւնը, կուսակ-  
ցական ատելութիւնը, ինչ սր  
մենք ենք քարոզել : հրաւիրում  
հայ զինուորին չը կեղեքել, ասն  
ջել ժողովրդին, և վերջապէս  
ըլլու յեղափոխականներին և  
ժողովրդին հրաւիրում է քով  
քովի գալ, որովհետեւ դադա-  
տութեան գործը զժուարին գործ  
մը դարձած է :

Այսպիսի հեղինակաւոր հաս-  
տատում մեր քննադատութիւն-  
ներին, այն էլ հրապարակով,  
ճիշտն ասած այդ քան շուտով չէ-  
ինք սպասում մայնէլ (Խաղմիկու՞մո՞  
ՎԱՐԴՈ

#### ՊՍԵՏՕՆԱԿԱՆ ՀՐԱԻԷՐ

Պուլկարիոյ հայ գաղութը ար-  
ժանաւոր եկեղեցական Առաջ-  
նորդով մը օժտելու նպատակաւ  
թուականէս իբր ութ ամիս առաջ  
ժողովքեան փափագին համա-  
ձայն սարքուած միթիւնկին ու

րոշմամբ, և թաղական խորհրդի  
դոյս քոյր թղականութեանց  
նախօք ստացած հ. մ. ձայնու-  
թեամբ, արցեալ մայիտ 4 թուա-  
կիր առ Ն. Ս. Օժուլիսն Վեհ. փա-  
տիկն եղած զմոմին ի պա-  
ասխան, Սրբազնուգոյն Հայրա-  
պետն բարեհաճած է նկատողու-  
թեան առնելով խնդիրն, իր  
կողմանէ յատուկ կոնդակաւ զը-  
կած է բարձրաշնորհ Տէր Տաճատ  
վ. Մելքոնեանը Պուլկարիոյ ազգ-  
եկեղեցական պատգամաւորական  
ժողով գումարելով առաջնորդա-  
կան րնաւութիւն կատարելու :

Աստի կը հրաւիրուի մայրոյ  
հայ հասարակութիւնը վայրա-  
նաւորեան Ս. Պատարագին ներ-  
կայ գտնուիլ յունկէրութիւն  
Վեհ. Հայրապետին սրբատու  
կոնդակին, և կէս օրէն յետոյ,  
իւսմ 2, յի՛զգ, վարժարան առ  
ի խոյ հրդակցութիւն վերսկզ-  
եւ կարեւոր խնդրոյն :

Թաղական Խորհուրդ  
(ԿՆ/Ք)  
23 Սեպտ. 1906  
Վառնա

#### ՍԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Կաթովիկուր, ժամանակին  
Պուլկարիոյ թաղականութիւննե-  
րու զիժուժի հիման վրայ իր  
նախկին դիւանի քարտուղար  
Տաճատ վարդապետը իրրեւ պա-  
տուիրակ զրկած է Պուլկարիա  
պատգամաւորական ժողով գու-  
մարելու առաջնորդ ընտրելու  
համար : Դաճատ վարդապետ  
այժմ կը գտնուի Վառնա և ինչ-  
պէս կը տեսնուի թաղականու-  
թեան ազգէն, վաղը պաշտօնա-  
պէս պիտի յայտարարէ իր գա-  
լուն նպատակ :

Յուսանք որ Տաճատ վարդա-  
պետը իր միսիան կատարէ ա-  
հիլի փոյձստու կերպով, քանի  
որ այնքան խնոր փորձառու  
թիւն մը ունեցաւ կովկասի մէջ :

#### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

##### Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Սուլթանի բժշկապետը պաշ-  
տօնապէս կը հերքէ Ուլթանին  
երկկամունքային զաղցկեղ ու-  
նենալը :

— Իրտակարգ նախարարական  
ժողովի մը մէջ վիճարանութեան  
դրուեր է թէ թուրքիան ինչ  
գիրք պիտի բռնէ Պուլկարիոյ  
հանդէպ, Վիճարանութեան նիւթ  
եղած է նաեւ սահմանազուխ  
ներուն վրայ եղած ընդհարում  
ները և ժողային ցոյց մը Պուլկա-  
րիոյ ջուրերուն մէջ :

##### Թ Ո Ւ Ս Ի Ա

Բեթերսպուրկէն կը հեռագ-  
րեն թէ՛ Մեծ լիխան նիքոյայի

կարգադրութեամբ լուծուած է  
ցարին թիկնապահ զօրաց գուն-  
դր և ատոնց պաշտօնը պիտի  
կատարեն ոստիկան ժանտարա-  
ւները :

— Ռուս կուսակցութիւնը  
40000 բուրի տուած է Գիշինէի  
հակահրէական ցոյցերու կազմա-  
կերպման համար :

— Յարը վերագառնալուն պէս  
իսկոյն պիտի հրամայէ հոգե-  
բւժնելի զիւրացիներուն, իսկ բո-  
լորովին անկալուած գիւղացի-  
ները պետական ծառայութեանց  
մէջ տեղաւորելու :

— Ոստիկանութիւնը Խօսկովի  
մէջ բուժարանու գործարան մը  
գտած է, նրկու լիքը և 60 պա-  
րապառուժ գտնուած է :

— Լօնսօնեան թերթ մը կը  
հաղորդէ որ ցարը մասնաւոր  
նամակ մը դրած է Անգլիոյ թա-  
գաւորին յայտնելով որ շուտով  
Տուճան պիտի հրաւիրուի, միև-  
նոյն ժամանակ պարզած է թէ  
ինք զեռ սրտած չէ սահմանագ-  
րական երդում սալ, որովհետեւ  
Ռուսիոյ պայմանները այնքան  
խառնակ են որ այդ երդում տա-  
լը կարուժ ունի յարմար վայրկե-  
անին :

— Պերլինէն կը հաղորդուի որ  
Արևիկ նահանգի մէջ մէկ միլ  
եօնէն աւելի առթի գիւղացի-  
ներ կան, նոյնպէս և Սինգէն-  
միր : Սուլթ և գիւղացիական շար-  
ժումները կը տիրապետեն Վիատ  
կայի ամբողջ նահանգը :

— Փէնէրալ կողմով սպանողին  
մահուան պատժը տեղի ունե-  
ցել է :

#### Ա Ր Ե Ե Լ Ք

Լոյս տեսաւ մեր տպարանէն Հայ-  
աստանի եւ գրացի երկիրներու մե-  
ծաղիք (մեղր 1 12) քարտեզը օ-  
րեւելք վերնագրի տակ Այս քար-  
տեզը յատկապէս պատրաստուած է  
ազգային վարժարաններու եւ վաճա-  
ռականական գրասենեակներու համար :  
Մասնաւոր խնամք տարուած է տպ-  
ագրութեան մաքրութեան եւ սառ-  
երու յստակութեան : Եօթը զանազան  
գոյներով կ'որոշուին բոլոր գրացի  
տեղութեանց երկիրները : Քարտեզին  
մէկ անկիւնը մայնաեւ Կ. Պոլսի  
մասնակի քարտեզը, իսկ հարաւակող-  
մը զանազան սիւնեակց մէջ գրուած  
են օգտակար վիճակագրական տեղե-  
կութիւններ :

Գինն է ֆոտակա 5—ոտրի 2—տո-  
լար 1 :

Դիմել մեր տպարան հասցէին :

Էմբրիւմըրի Արմէնիէն Սիլ Լազար  
Վէնիս (Իթալիա)